

## **ԱՆԻ ՏԵՐՏԵՐՁԱՆ**

*ՀՀ արտակարգ իրավիճակների  
նախարարության ճգնաժամային  
կառավարման պետական  
ակադեմիայի աշխատակից*

### **ԶԵՇՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ԲՆՈՐՈՇ ՈՒՍԿԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԵԹՈՂՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

Տնտեսության համընդիանքացումը, տեղեկատվության՝ որպես արտադրության գործոնի դերի աճը պահանջում են ձեռնարկությունների ռիսկերի կառավարման նոր նոտեցումներ, նեխանիզմներ և մեթոդներ, ինչպես նաև եղածների արդիականացում։ Տնտեսավարող սուբյեկտների գործունեության արդյունքում ի հայտ են գալիս նոր ռիսկեր, որոնք պայմանավորված են տնտեսության մեջ ենթադրությաին (բիֆորկացիոն) միտումների և կառավարման շարժմբացի անկայունությամբ։

Ոխսկը այն հասկացություններից է, որն այսօր օգտագործվում է գրեթե բոլոր բնագավառներում և ոլորտներում։ Տնտեսագիտությունն ուսումնասիրում է ձեռնարկատիրական ռիսկերը։ Այս հարցի շուրջ մեր տեսակետը ներկայացնելու նպատակով կատարենք մի շարք դիտարկումներ։

Տնտեսագիտությունը ռիսկը ասհմանում է որպես հավանական վտանգ, ռեսուրսների հավանական կորուստների կամ եկանուտների չտացում ձեռնարկատիրական նախատեսված բնականու գործունեության ընթացքում։ Ոխսկն ընդունվում է որպես հավանական իրադարձություն, որի ծագման դեպքում կարող են ի հայտ գալ չեզոք կամ բացասական հետևանքներ։ Ձեռնարկատիրական ռիսկը համարվում է ռիսկի տեսակ, որը կապված է ռեսուրսների կորսուի հնարավորության (հավանականության), եկանուտների լրիվ չստացման կամ էլ որոշակի ձեռնարկատիրական գործունեության իրականացման գործընթացում լրացուիչ ծախսերի առաջացման հետ։

Կարծում ենք, որ ռիսկն իսկապես ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվում է կորուստներին, բայց դա հավանական իրադարձություն չէ (ոչ էլ այլ տիպի իրադարձություն է), վտանգ չէ, այլ՝ հավանական իրադարձությունից (ավելի ճիշտ՝ վտանգից) կորուստների հավանական չափն է։

Ոխսկը ցանկացած ոլորտում և ամենուրեք հանդես է գալիս որպես չափելի և զնահատվող հասկացություն, որը տալիս է քանակական բնութագրեր, հետևաբար՝ պետք է ընդունել ռիսկի գնահատման այն մեթոդները, որոնց բոլոր բաղադրիչներն ունեն չափողականություն։ Ուսաի, ընդհանրացնելով ռիսկի սահմանումները, ընդունելի ենք համարում հետևյալ ձևակերպումը. ռիսկը վատանգի կամ վատանգավոր երևոյթի հավանական չափն է՝ արտահայտված հնարավոր կորուստներով։

Դիտարկելով և վերլուծելով ձեռնարկատիրական գործունեության հետ կապված ոխսերի գմահատման և կառավարման դաշտը՝ համոզվում ենք, որ ձեռնարկատիրական ոխսերի ուսումնասիրությունը դեռևս բերի է, քանի որ ոչ բոլոր ոխսերն են բացահայտված և ներառված այդ շաբթում: Տարաբնույթ արտակարգ իրավիճակների, աղետների, ճգնաժամերի ոխսերն ուսումնասիրված և ներառված չեն ձեռնարկատիրական ոխսերի գնահատման և կառավարման ոլորտում:

Ցանկացած ձեռնարկության գործունեություն նպատակային է, որից էլ բխում է նրա առաջնային խնդիրներից մեկը՝ սեփական գործունեության անվտանգության ապահովումը, իսկ ձեռնարկատիրական ոխսերի շարքում չկան այդ դրույթն ապահովող ոխսկի վերլուծականներ: Որպես կանոն, տնտեսագիտական գրականության մեջ ոխսերի ուսումնասիրությունը սահմանափակվում է միայն ձեռնարկատիրական՝ ֆինանսատնտեսական, արտադրական գործունեությամբ պայմանափորված ոխսերով և շահույթի ստացման հետ կապվող ոխսային գործընթացներով: Ծիշտ է, ոխսկը տարբեր գիտությունների և անգամ նույն գիտության շրջանակներում չունի միանշանակ և համընդիմանուր սահմանում, սակայն ձեռնարկատիրական գործունեությանը բնորոշ ոխսերի ուսումնասիրության մեջ խոսք անգամ չկա արտակարգ իրավիճակների, աղետների ոխսերի վերաբերյալ, այնինչ դրանց մեծ մասը բնորոշ է ցանկացած ձեռնարկության:


Որպես ասվածի մասնակի լրացում՝ անհրաժեշտ է նշել այն փաստը, որ, խոսելով ձեռնարկատիրական գործունեության ոխսերի մասին, դիտարկվում են աղետների ոխսերը, սակայն միայն ապահովագրության տեսանկյունից: Իսկ ապահովագրությունը փոխհատուցման միջոց է, որը ոչ մի կերպ չի կարող ազդեցություն ունենալ ոխսկի նվազեցման առումով:

Ասվածը հիմնավորենք ապահովագրական ոխսկի սահմանմամբ. ապահովագրական ոխսկը հավանական իրադարձության կամ իրադարձությունների գումար է, որոնց վրա հասնելու հետ կապված՝ իրականացվում է ապահովագրություն: Այս ոխսերի մեջ մտնում է նաև տարերային աղետների ոխսկը:

Տվյալ սահմանման մեջ նշվում է, որ իրավիճակի վրա հասնելուց հետո կատարվում է ապահովագրություն, սակայն, ինչպես նշեցինք, դա չի կարող լինել արտակարգ իրավիճակի ոխսկի կառավարման միջոց, քանի որ ոխսկի կառավարումը ոխսկի նվազեցմանն ուղղված բազմաթիվ և բազմաբնույթ գործընթացների համակարգված իրականացումն է: Իսկ ապահովագրության գործընթացը կատարվում է միայն իրավիճակի ստեղծման պահից հետո, հետևաբար՝ բավարար պայման չէ ոխսկի առաջացումը կանխելու կամ վտանգից խոցելությունը նվազեցնելու համար:

Ձեռնարկատիրական ոխսերի ուսումնասիրության դաշտում աղետների ոխսերի ոչ լիարժեք ուսումնասիրումը նկատելի բացթողում է: Արտակարգ իրավիճակների, աղետների, ճգնաժամերի առաջացումը չկանխելու դեպքում ձեռնարկություններն անխուսափելիորեն հայտնվում են քառային իրավիճակներում: Դրանցից խոսափելու համար նախնառաջ անհրաժեշտ է բացահայտել բնական, տեխնածին վտանգներից, վտանգավոր երևույթներից առաջացող ճգնաժամերի, աղետների ոխսերի նվազեցման ուղիներ:

Կարծում ենք՝ ձեռնարկությանը սպառնացող հիմնական ռիսկերը կարելի է ներկայացնել երկու ընդհանրացված ենթահամակարգերի տեսքով.



Առաջին ենթահամակարգում ընդգրկվում են տնտեսական, ֆինանսական ճգնաժամերը կամ դրանց առաջացման նախադրյալները՝ եկամտաբերության աճկում, անկայուն շուկայական հարաբերություններով պայմանափորված իրացկելիության նվազում և այլ բացասական երևույթներ, որոնք կարող են ճգնաժամի առաջացման պատճառ լինել ձեռնարկության համար:

Երկրորդ ենթահամակարգում ներառվում են տարաբնույթ արտակարգ իրավիճակների, աղետների և ճգնաժամերի ռիսկերը: Օրինակ՝ երկրաշարժեր, սողանքներ, քաղաքական անկայուն վիճակ, համաճարակներ և այլն:

Այս երկու ենթահամակարգերն ուղղակիորեն փոխկապված են կառավարման աստիճանակարգության ցանկացած մակարդակում, քանի որ անհերթելի փաստ է ճգնաժամերի, աղետների և զարգացման գործընթացների միջև կապը:

Այսպես՝ զարգացման գործընթացը կարող է նպաստել կամ խոչընդոտել ճգնաժամերի առաջացմանը: Մյուս կողմից՝ կառավարման համակարգում ծագած ճգնաժամերը կարող են խոչընդոտել կամ նպաստել զարգացման գործընթացներին:

Օրինակ՝ սոցիալ-տնտեսական զարգացումը հանգեցնում է նոր՝ առավել անվտանգ տեխնոլոգիաների ներդրմանը, առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը, քայլ, միաժամանակ, կարող է նաև մեծացնել խոցելիությունը: Օրինակ՝ ջրային ռեսուրսների օգտագործման նպաստելով կարող են կառուցվել նոր ջրամբարներ, և, բնականաբար, կմեծանալ ջրհեղեղների, սողանքների, փլուզումների վտանգը:

Աղետներն ել իրենց հերթին կարող են խոչընդոտել սոցիալ-տնտեսական համակարգի զարգացմանը: Օրինակ՝ աղետը կարող է հանգեցնել մարդկային և նյութական ռեսուրսների կորսադի, բյուջեի պակասուրդի աճի և այլն: Սակայն այն կարող է նաև խթանել տնտեսության զարգացումը. օրինակ՝ իհն տեխնոլոգիաների վերացում և նոր՝ առավել անվտանգ տեխնոլոգիաների ներդրում, սեյսմակայուն շինարարություն և այլն:

Ուսկերը պետք է դիտարկել համակարգված՝ հաշվի առնելով հավանական ազդեցությունները: Դրանք կարող են լինել շարակցական: Այսպես՝ զարգացմատակարարման համակարգի վնասումը կարող է առաջացնել հրդեհ, հետևաբար՝ տեղի կունենա արտադրության կանգ, այնուհետև զագի արտահոսքից՝ պայթյունի վտանգ, առարման պայմանագրի խզում և այլն:

Զեռնարկատիրական գործունեության մեջ կարևորելով ճգնաժամերի և աղետների առաջացման ռիսկերի ուսումնասիրությունը՝ լուծվում է մի կարևոր խնդիր ևս. այդկերպ ոչ միայն բացահայտվում են տվյալ ձեռնարկությանը բնորոշ, այլ նաև տնտեսության որոշակի ոլորտի ռիսկերն ամբողջությամբ: Այս նպատակով անհրաժեշտ է ներդնել ռիսկի վերլուծության և գնահատման համալիր, միասնական համակարգ, այսինքն՝ ռիսկերի կառավարման տնտեսական մեխանիզմի եռթյունը բացահայտել համակարգային վերլուծության մեթոդի միջոցով, որն իր մեջ ներառում է հետևյալ փուլերը՝

- սահմանների որոշում,
- խնդիրների վերլուծություն,
- անհրաժեշտ պայմանների վերլուծություն,
- տրամաբանական պլան,
- որոշումների վերլուծություն:

Համակարգային վերլուծությունը հնարավորություն է տալիս նվազեցնելու ռիսկերը՝ կառավարչական արդյունավետ և օպտիմալ որոշումների ընդունման և իրականացման արդյունքում:

Ռիսկի կառավարումը ռիսկի նվազեցմանն ուղղված բազմաթիվ և բազմաբնույթ գործընթացների համակարգված իրագործումն է:

Զեռնարկատիրական ռիսկերի կառավարման նպատակով անհրաժեշտ ենք համարում կատարել ձեռնարկությանը բնորոշ բոլոր տիպի վտանգների, ինչպես նաև կարողությունների և տվյալ վտանգի հնարավոր հետևանքների գնահատում:

Վտանգը բացասական հետևանքներ պարունակող սպառնալիք է: Ռիսկի նվազեցման համար կառավարման որոշումների ընդունումն ու իրականացումը կապված են վտանգների վերացման կամ դրանց ազդեցության նվազեցման հետ: Այդ իսկ պատճառով կարևորվում է նաև վտանգների ուսումնասիրությունը: Զեռնարկությանը սպառնացող վտանգները կարող են պայմանավորված լինել ներքին և արտաքին ազդեցություններով:

Կարողությունները ենթադրում են ֆինանսատնտեսական, տեխնիկական միջոցների և համապատասխան մասնագետների ու ենթակառուցվածքների առկայություն:

Ռիսկի գնահատման ամբողջական պատկերը ստանալու համար պետք է դիտարկել ճգնաժամի առաջացման դեպքում հնարավոր հետևանքները: Այդ հետևանքներից կարևորվում են կորուստները, քանի որ ոչ բոլոր հետևանքներն են հաշվելի: Օրինակ՝ մենք չենք կարող որոշել բարյահոգեբանական վնասների չափը, բայց, փոխարենը, կարող ենք հաշվել ֆինանսական, տնտեսական, մարդկային կորուստները:

Մեր կարծիքով՝ տնտեսության կայուն զարգացմանը նպաստող հիմնական ուղիներից մեկը ձեռնարկատիրական ռիսկերի արդյունավետ կառավարումն է և դրանց նվազեցմանն ուղղված համապատասխան ռազմավարության մշակումն ու իրականացումը:

Զեռնարկատիրական ռիսկերի կառավարման հիմնախնդիրը դեռևս լիարժեքորեն ուսումնասիրված և գնահատված չէ, ինչն էլ խոցելի է դարձնում ձեռնարկատիրական գործունեությունն արտաքին և ներքին վտանգ-

Աերի հանդեպ: Այդ առումով, ոլորտին առնչվող մեթոդական դաշտի կատարելագործման և ինստիտուցիոննալ բնույթի միջոցառումների անհրաժեշտությունն ակնհայտ է: Զեռնարկությունները, չունենալով աղետների, ճգնաժամերի ռիսկերի վերլուծականներ, զնահատման մեթոդաբանություն, վտանգում են իրենց գործունեությունը, հեղինակությունը և հետագա զարգացումը: Ուստի զիտատեխնիկական առաջընթացին զուգընթաց պետք է վերանայվեն ձեռնարկատիրական ռիսկերի զնահատման մեթոդները, գտնվեն կառավարման հիմնահարցերի լուծումներ:

### **АНИ ТЕРТЕРЯН**

*Сотрудница МЧС РА,  
Государственной академии  
кризисного управления*

***Методика комплексной оценки и управления всеми рисками присущими предпринимательской деятельности.***- В условиях рыночных отношений для повышения эффективности деятельности экономических субъектов важное значение приобретает обработка новых методов, механизмов, подходов в управлении рисками. И в этом аспекте стало новаторством обобщение предпринимательских рисков: обсуждение основных задач оценки и управление рисками бедствий, катастроф, чрезвычайных ситуаций.

### **ANI TERTERYAN**

*Employee at State Academy of Crisis  
Management of the Ministry of  
Emergency Situations*

***Methods of Complex Assessment and Management of All Risks Peculiar to Entrepreneurial Activity.***- In the market relations new methods, mechanisms and approaches to risk management acquire a new significance for increasing the efficiency of the activity of economic subjects.

And in this aspect, generalization of entrepreneurial risks has become crucial in the discussion of the main objectives of risk assessment and management of emergency situations.